

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի գիտական խորհրդի 2018թ. սեպտեմբերի 26-ի նիստի
Գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 47-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Գիտական կոչումների շնորհում:
2. Մանկավարժական պրակտիկայի բարեփոխումների ընթացքի մասին:
Ձեկ. Վահան Սարգսյան
3. Համալսարանի 2019-2020 ուս.տարվա ընդունելության
մասնագիտությունների և քննությունների ցանկի հաստատման մասին:
Ձեկ. Մհեր Մելիք-Բախշյան
4. ՀՊՄՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման
ընթացակարգի մասին:
Ձեկ. Մհեր Մելիք-Բախշյան
5. Համալսարանի գիտական խորհրդի 2018-2019 ուս. տարվա
աշխատանքների ծրագրի մասին:
Ձեկ. Մարիամ Իսպիրյան
6. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ Ռուբեն Միրզախանյանը ներկաներին
առաջարկեց հաստատել նիստի օրակարգը, եթե նրանք այլ առաջարկություններ
չունեն:

Գիտական խորհրդի անդամները միաձայն հաստատեցին օրակարգը:

Ծննդյան հոբելյանի առթիվ պարոն Միրզախանյանը շնորհավորեց
համալսարանի ութ դասախոսների և նրանց շնորհեց դրամական պարգև:

Գիտական խորհրդի նախագահը շնորհավորեց նաև համալսարանի
դասախոսներ Սամվել Պողոսյանին՝ պրոֆեսորի գիտական կոչում և Արա
Գևորգյանին, Մարիամ Եղյանին, Հայկ Գրիգորյանին, Կարինե Միրզոյանին, Արմինե
Վահանյանին, Լուսինե Սողոմոնյանին, Սուսաննա Բաղդասարյանին, Աստղիկ
Բալայանին և Լևոն Նազարյանին դոցենտի գիտական կոչում ստանալու
կապակցությամբ և հաճնեց վկայագրերը:

Լսեցին – Գիտական և ուսումնամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը համալսարանի երեք դասախոսների գիտական կոչումներ շնորհելու մասին:(Կից՝ տես ցուցակը):

Որոշեցին – Համալսարանի դասախոսներ Քնարիկ Աբրահամյանի, Արմինե Բաղդասարյանի և Արմինե Միքայելյանի թեկնածությունները դնել գաղտնի քվեարկության:

Լսեցին – Ձայներ հաշվող հանձնաժողովի ընտրության մասին:

Որոշեցին – Ստեղծել ձայներ հաշվող հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Աշոտ Գալստյան - նախագահ
2. Ջուլիետա Գյուլամիրյան
3. Պարույր Գալստյան
4. Զարուհի Խաչատրյան
5. Էդուարդ Սարյան

Լսեցին – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աշոտ Գալստյանի հաղորդումը գիտական կոչումների շնորհման քվեարկության արդյունքների մասին:

Աբրահամյան Քնարիկ (դոցենտի կոչման համար) – 45 կողմ, 1 դեմ, 1 անվավեր քվեաթերթ

Բաղդասարյան Արմինե (դոցենտի կոչման համար) – 46 կողմ, 0 դեմ, 1 անվավեր քվեաթերթ

Միքայելյան Արմինե (դոցենտի կոչման համար) – 46 կողմ, 0 դեմ, 1 անվավեր քվեաթերթ

1. Որոշեցին –

– Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 47-ը, 45 կողմ, 1 դեմ, 1 անվավեր քվեաթերթ/ Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Քնարիկ Արմենի Աբրահամյանին <<Գրականագիտություն>> (Ժ.01.00) մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 47-ը, 46 կողմ, 0 դեմ, 1 անվավեր քվեաթերթ/ Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Արմինե Աղվանի Բաղդասարյանին <<Մանկավարժություն>> (ԺԳ.00.00) մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ,

մանկավարժական գիտությունների թեկնածու Արմինե Վալերիի Միքայելյանին <<Մանկավարժություն>> (ԺԳ.00.00) մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, և դիմել ՀՀ ԲՈԿ այդ որոշումը հաստատելու խնդրանքով:

Լսեցին - Մանկավարժական պրակտիկայի բարեփոխումների ընթացքի մասին: (Ձեկ՝ պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյան):

Վահան Սարգսյանը խոսեց մագիստրոսական պրակտիկայի բարելավման մասին և ընդգծեց, որ նախատեսվում է պրակտիկայի մեկ շրջափուլը կազմակերպել դպրոցներում, կրթական ու վերականգնողական կենտրոններում, իրականացնել հանձնաժողովային գնահատում և ամփոփում, ապահովել հետազոտական և մանկավարժական բաղադրիչների միաժամանակյա գործարկում: Բացի այդ, նախատեսվում է ուժեղացնել գիտամեթոդական ուղեկցումը, կազմակերպել կիսամյակային սեմինարներ, բարձրացնել բուհում մանկավարժահետազոտական պրակտիկայի ղեկավարների հաշվետվողականությունը: Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը նշեց, որ պրակտիկայի բնագավառում կան լուրջ ձեռքբերումներ, որոնք արդյունք են Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ արդյունավետ աշխատանքի:

2. Որոշեցին –

1. Պրակտիկայի բարեփոխումների ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել համալսարանի կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ Մկրտիչ Ավագյանին և պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին մինչև 2019 թվականի մարտի 15-ը 2019-2020 ուսումնական տարվա ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկի չափորոշիչներում կատարել հետևյալ փոփոխությունները.
 - ա) առկա ուսուցման համակարգում մանկավարժական պրակտիկայի մեկ խմբում ընդգրկված ուսանողների թիվը սահմանել 8-10 ուսանող,
 - բ) 4-րդ կուրսի ամփոփիչ մանկավարժական պրակտիկաներում ներգրավել մանկավարժ և հոգեբան խորհրդատուների:

3. Ֆակուլտետների ղեկաններին՝ ապահովել հսկողություն պրակտիկայի կազմակերպման որակի և պրակտիկայի արդյունքների պաշտպանության, գնահատման գործընթացի նկատմամբ:

4. Ֆակուլտետների պրակտիկայի պատասխանատուներին՝ ՀՊՄՀ մանկավարժական պրակտիկայի թղթապանակի կիրառման ընթացակարգի պահանջներին համապատասխան ապահովել մանկավարժական պրակտիկայի նախապատրաստական և ամփոփիչ սեմինարների կազմակերպումը:

5. Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ Մկրտիչ Ավագյանին և պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանին՝ ապահովել Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի պրակտիկային առնչվող գործողությունների և քայլերի կատարումը:

6. ՀՊՄՀ մասնագիտական պրակտիկաները կազմակերպող ամբիոններին՝ յուրաքանչյուր պրակտիկայի ավարտից հետո, ամբիոնի նիստերում քննարկել պրակտիկայի արդյունքները և ներկայացնել առաջարկություններ պրակտիկայի որակի շարունակական բարելավման ուղղությամբ:

Լսեցին - Համալսարանի 2019-2020 ուս.տարվա ընդունելության մասնագիտությունների և քննությունների ցանկի հաստատման մասին: (Ձեկ՝ պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյան):

3. Որոշեցին – Հաստատել Համալսարանի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության մագիստրոսի և բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի (առկա և հեռակա ուսուցման) մասնագիտությունների և քննությունների ցանկը՝ համաձայն հավելվածի(Կից՝ տես հավելվածը):

Լսեցին - ՀՊՄՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման ընթացակարգի մասին: (Ձեկ՝ պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյան):

Պարոն Մելիք-Բախշյանը ներկայացրեց համալսարանի բակալավրիատի կրթական ծրագրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման նոր կարգը, ըստ որի՝ շրջանավարտներն իրենք են ընտրում ավարտական քննության ձևը, իսկ քննությունների ձայնագրությունները պահվում են ոչ թե 1 օր, այլ 6 ամիս: Նոր կարգի համաձայն՝ ամփոփիչ ատեստավորման գնահատականում պրակտիկային կհատկացվի 20%, իսկ կամավորական աշխատանքին՝ 5%, ինչպես նաև մագիստրոսներին գերազանցության դիպլոմ տրամադրել 90 % ՄՈԳ-ի դեպքում՝ նախկին 95-ի փոխարեն:

4. Որոշեցին –

1. Հաստատել <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը>>:
2. Հանձնարարել ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը /պետ՝ Մ.Ավագյան/ մինչև 2018թ. հոկտեմբերի 31-ը մշակել և ՀՊՄՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բակալավրի կրթական ծրագրի շրջանավարտների ավարտական աշխատանքների կազմակերպման կարգը:(Կից՝ տես կարգը):

Լսեցին - Համալսարանի գիտական խորհրդի 2018-2019 ուս. տարվա աշխատանքների ծրագրի մասին:(Զեկ՝ գիտական քարտուղար Մարիամ Իսպիրյան):

Տիկին Իսպիրյանը նշեց, որ գիտական խորհրդի աշխատանքային ծրագիրը նախապես բաժանվել է գիտական խորհրդի անդամներին: Առաջարկություններ չեն եղել:

5. **Որոշեցին** – Հաստատել Համալսարանի գիտական խորհրդի 2018-2019 ուս. տարվա աշխատանքների ծրագիրը:(Կից՝ տես ծրագիրը):

Ընթացիկ հարցեր.

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի ասիստենտ Ռոմիկ Քոչարյանի դոկտորական ատենախոսության թեման, Հյուսիսային համալսարանի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի դոցենտ Արմեն Հարությունյանի դոկտորական ատենախոսության թեման, Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի ասիստենտ Էմմա Յարազյանի թեկնածուական ատենախոսության թեման, Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ Սոֆյա Հովսեփյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու մասին:

6. Որոշեցին –

- Հաստատել.
- Ռոմիկ Քոչարյանի <<Մովսես Խորենացու պատմագիտական և պատմափիլիսոփայական մեկ-միասնական հայեցակարգի բացորոշումը

հերմենևտիկական մեթոդաբանությամբ >> /Թ.00.01.թվանիշով/ դոկտորական ատենախոսության թեման:

- Արմեն Հարությունյանի << Գեղարվեստական կրթության հիմնախմբիները հայ դպրոցի և մանկավարժության պատմության համատեքստում (XIX-XX դարասկիզբ)>> /ԺԳ.00.01.թվանիշով/ դոկտորական ատենախոսության թեման:
- Էմմա Յարազյանի << Հայաստանի և Շոտլանդիայի բարձրագույն մասնագիտական-մանկավարժական կրթության համեմատական վերլուծությունը>> /ԺԳ.00.01.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման: (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր Աիդա Թովուզյան):
 - Սոֆյա Հովսեփյանի <<Աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող արտթերապևտիկ միջամտության մանկավարժական պայմանները>> /ԺԳ.00.01.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատումը հետաձգել՝ ամբիոնում մեկ անգամ ևս քննարկելու համար: (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Մարիաննա Հարությունյան):

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Ռուբեն Միրզախանյանի <<Մշակութային կյանքը Հայաստանում (1921թ. ղեկտեմբեր - 1934թ)>> գիրքը, Վազգեն Համբարձումյանի <<Լեզվաբանության հիմունքներ>> ուսումնական ձեռնարկը մասին:

7. Որոշեցին - Վերոնշյալ աշխատանքները երաշխավորել հրատարակության:

Լսեցին - Գիտական խորհրդին կից գիտական և ուսումնամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի կազմի փոփոխության մասին: (Զեկ.՝ պրոռեկտոր Սրբուհի Գևորգյան):

8. Որոշեցին – Գիտական խորհրդին կից գիտական և ուսումնամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի կազմի փոփոխության մասին:

Լսեցին - Համալսարանի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության և դրա համար ուսանողին հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու լրամշակված Ժամանակավոր կարգի մասին:

(Զեկ.՝ պրոռեկտոր Արա Երեմյան):

9. Որոշեցին –

1. Հաստատել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության և դրա համար ուսանողին հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու լրամշակված Ժամանակավոր կարգը:

2. Ֆակուլտետների դեկաններին հանձնարարել մինչև 2018թ. հոկտեմբերի 10-ը իրազեկել ուսանողներին լրամշակված ժամանակավոր կարգի մասին:
3. Կրթական գործընթացների և բարեփոխումների վարչությանը հանձնարարել մինչև 2018թ. նոյեմբերի 1-ը @aspu.am-ի Google Drive տիրույթում ստեղծել ժամանակավոր կարգից բխող համապատասխան գործիք:
4. Լրատվական վարչությանը հանձնարարել 3 օրյա ժամկետում ժամանակավոր կարգը տեղադրել համալսարանի aspu.am կայքում:
5. Կրթական գործընթացների և բարեփոխումների վարչությանը, ֆակուլտետների դեկաններին, ամբիոնների վարիչներին հանձնարարել աշխատանքները կազմակերպել և իրականացնել Կարգին համապատասխան:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյանին:

Լսեցին – Համալսարանում Կառուցվածքային փոփոխությունների մասին:

10.Որոշեցին –

1.Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը դասավանդվող դասաժամերով տեղափոխել Համալսարանի Կերպարվեստի ամբիոն:

2.Համալսարանի Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնը լուծարել:

Լսեցին – Հատուկ կրթության ֆակուլտետի անվանափոխության մասին:

11. Որոշեցին - Համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետը վերանվանել Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի:

Լսեցին – Անվանական կրթաթոշակի շնորհման մասին:

12. Որոշեցին - Պատմության և իրավագիտության ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի <<Պատմություն>> մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Լաուրա Ծովակի Ռաշոյանին նշանակել <<Մովսես Խորենացի>> անվանական կրթաթոշակ:

Լսեցին - Սկոլկովսկու գիտության և տեխնիկայի իստիտուտի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Արտեմ Օգանովին Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին:

13. Որոշեցին - Սկոլկովսկու գիտության և տեխնիկայի իստիտուտի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Արտեմ Օգանովին շնորհել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

Լսեցին – Համալսարանում Համայնքային ներառականության և հաշմանդամության հիմնախնդիրների հետազոտական կենտրոն ստեղծելու մասին:

14. Որոշեցին - Համալսարանում ստեղծել Համայնքային ներառականության և հաշմանդամության հիմնախնդիրների հետազոտական կենտրոն:

ԳԻՏԽՈՐՀՐԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ